

Այդ շիթերուն, հագուստներուն այդ կարմիր
երկար պիշ պիշ կը նայի-
հետանիքի արիւնն, արիւնը ցեղին
Բընազդով զինք կը թովնն:

Եւ արցունքէն խաթարուած իր աչքին մէջ
վըրջժն անա կը ծընի,
Ջերդ կ'որ կորինն որ փըլատակ այրին մէջ
իր մեղկ քունէն կ'արթըննայ:

ՅՈՎԱԾՔ ՍԵՐԱՍՏԱՅԻ

Աշկ. Մ. Ռ. Ջըժ. Կ



ՅՐ. ՄԱՐԷԼԻ ԵՒ ՖԱՐՄԱՆԻ ԱՍՄԱՆ

Նոր ստացայ ծանօթ հայագետ Ֆր. Մա-
րգլէրի թարգմանած ֆարմանի Ասման վէ-
պը: Մի քանի տարիներ երեւցան Անահիտ
հանդէսին մէջ թէ՛ սոյն վէպը հայերէն և
ֆրանսերէն թարգմանութեամբ՝ և թէ՛ Ֆր.
Մարգլէր:

Հատորիկը որ հիմայ առջեւ ունիմ
ուրիշ բան չէ՝ բայց եթէ Անահիտ թերթէն
բարեփոխուած՝ Բարիզու Revue des
Traditions Populaires-ի մէջ կրկին
հրատարակուած՝ յաւելեալ ներածութեամբ
մը, և անկից առանձին հրատարակուած
սա ճակատով. *Histoire de Pharami
Asman*, Traduite de l'arménien sur
le manuscrit conservé à la Biblio-
thèque nationale, par Frédéric Mac-
ler, 1906:

Ֆարմանի Ասմանի հայերէն ընագիրը
ոտանաւոր է, քառատող տուններով. և ըստ
Ֆրանս. թարգմանութեան՝ 322 տուններու
(խորագիրներն ալ հաշուելով) մէջ կը բռ-
վանդակէ այդ վիպակը:

Սոյն վէպը արդէն շատ ախորժուած
Հայերէս՝ բաւական թուով ձեռագիրներու
մէջ մեզի կը հանդիպի. և 1724ին կ. Պոլ-
սոյ մէջ կը հրատարակուի Ներսէս Շնոր-
հալոյ առակներուն հետ: Այս հրատա-
րակութիւնը գիտէ Ֆր. Մարգլէր, բայց զայն
չէ տեսած: Մենք որ տեսած բաղդատած
ենք այդ տպագրութիւնը՝ շատ խեղճ կը
գտնենք և սխալ ընթերցումներով ու տը-

պագրիչին ինքնահաւան փոփոխութիւննե-
րով, և վերջապէս գէշ օրինակէ մը առաջ-
նորդուած: Դժբախտաբար նոյնպիսի սխա-
լագիր՝ ձեռագրի մը վրայէն կը թարգմա-
նէ Ֆր. Մարգլէր իր հրատարակած վէպը.
բայց այդ իսկ կ'ապահովէ զմեզ որ մե-
ծանուն հայագետը Ֆր. Մարգլէր՝ տիրացած
է նաեւ միջնադարեան հայերէն լեզուին և
իր յաջող թարգմանութիւնը զմեզ կը ստի-
պէ շնորհաւորել զինքը, և շնորհակալ ըլ-
լալ որ մեր մատենագրութեան մէջ պա-
հուած զոհար մը Եւրոպայի կը ներկայա-
ցնէ:

Ֆարմանի-Ասմանի վէպին վրայ մանրա-
մանն ուսումնասիրութիւն մ'եղած է ար-
դէն Հանդէսիս մէջ¹, և յօդուածագիրը ա-
ւելի համամիտ եղած է սոյն վէպին թարգ-
մանիչը կամ հեղինակը Կոստանդին Երզնե-
կացիին համարել, և առ այս ոչմ' առ ոչմ'
դրաւ Ֆարմանի վէպին և Կոստանդինի մէջ
եղած լեզուական նմանութիւնը:

Մեծ. Ֆր. Մարգլէր ինձ կը յղէր Ֆար-
մանի-Ասմանի ֆրանսերէն թարգմանու-
թեան փորձերը, նամակով մը մի քանի
հարցումներ ընելով և որուն պատասխա-
նեցի 2 ղեկտ. 1906, զոր կը յիշէ իր
զբոյն վերջը դրած իրացոյցի ժառօրոքեան
մէջ. որքան որ ժամանակս կը ներէր՝ վէ-
պիս թարգմանութիւնը բաղդատեցի (թէեւ
հարեանցի) մեր մի քանի ձեռագրաց հետ
և նշանակեցի մի քանի անճշդութիւններ՝
որոնք յառաջ եկած էին զլիսաւորապէս
Մեծ. թարգմանչին ձեռք ընկած սխալա-
գիր ձեռագրէն: Ինչպէս գրած էր ինձ՝ թէ՛
նամակս և թէ՛ բաղդատութիւնս ուշ հաս-
ցուցած էի, և վէպիս առաջին մասը ար-
դէն հրատարակուած է եղեր: Հոս ալ գրե-
թէ յիշեալ նամակս պիտի արտաայտեմ:

Հ. Ս. Պարոնեան, ինչպէս կ'ըսէ Ֆր.
Մարգլէր, Բարիզու Ձեռագրին վրայ գրած
է. « Ֆարմանի-Ասմանի, թարգմանուած
պարսկերէնէ հայկական տաղաչափու-
թեամբ (Ռովասափ Սերաստացիէն?) »: Տպ.

1. Տես Բագմանլէպ, 1906. Թ. 7, էջ 298-303 Հ.
Ն. Աղբրկեանի:

ի Կ. Պոլիս 1724 »: Բոլորովին անհիմն է
 Հ. Ս. Պարոնեանի այս կարծիքը, վասն
 զի Յովսէփի Սեբաստացին թէեւ տաղասաց
 մ'է՛ բայց իր տաղերու լեզուն, որոնք
 ինձ ծանօթ են, բոլորովին հեռի են Ֆար-
 մանի-Ասմանի վէպին լեզուին ոճէն: Հ.
 Ալիշան (Յուշիկը) և Հ. Չարբաբեան
 (Մատենագր. Բ. հտ.) զՅովսէփի Սեբաս-
 տացին ժեղ դարու վերջերը կը համարին.
 Իսկ Հ. Տէվկանցը (Հայերգ էջ Ժա) ԺԶ
 դարու տաղասացներու շարքին մէջ կը դնէ
 զՅովսէփի Սեբաստացին. (եւ աւելի Հ.
 Տէվկանցի կարծիքը ուղիղ կը համարիմ)
 և Ն. Մառ եւս իր Ամսոնայիկն Ուղեւորու-
 րիւնք գրքին մէջ (տպ. Վիեննա, 1892.
 էջ 56) երբ առիթը կ'ունենայ Յովսէփի
 փի տաղին մի կտորը հրատարակելու՝
 « ԺԶ դարու » բանաստեղծ կը համարի
 զինք. և արդէն Հ. Տաշեանի Յուցակին
 մէջի Յովսէփի գրիչը որ կը յիշուի (յէջ
 488) 1542 թուականին՝ շատ հաւանա-
 կան է որ ինքն Յովսէփի Սեբաստացի
 տաղասացն ըլլայ:

Եւ Կոստանդինի տաղերը 1326ին զը-
 րուած ըլլալով, քանի որ Կոստանդինն է
 որ ոճեր և ասացուածքներ կ'առնու Ֆար-
 մանի-Ասմանէն՝ պէտք է որ ներկայ վէ-
 պիս հեղինակը կամ թարգմանիչը ապրած
 ըլլայ յառաջ քան զԿոստանդին, որով զայն
 երբէք Յովսէփի Սեբաստացին չէ կարե-
 լի համարել:

Բայց թէ Կոստանդինն է Ֆարմանի-Աս-
 մանի հեղինակը (կամ թարգմանիչը), Չայս
 ուզեց հաստատել Հ. Անդրիկեան՝ հիմնուած
 լեզուական նմանութեանց վրայ: Եւ, թէեւ
 1906 Յունուարին կ'իմացնէի Պ. Ա. Չո-
 պանեանին (նամակով մը) թէ նմանութիւնք
 կը նշմարեմ Կոստանդինի քերթուածնե-
 րուն և Ֆարմանի-Ասման վէպին մէջ՝ բայց
 յետոյ տեսնելով նոյնպիսի նմանութիւնք
 երեք, չորս միջնադարեան բանաստեղծնե-
 րու ցով՝ շատ սովորական և ընդհանրա-
 ցած համարեցայ այդպիսի ասացուածք:
 Մեծ. Նորայր եւս Ֆարմանի-Ասման վէ-
 պին հեղինակութիւնը կամ թարգմանու-
 թիւնը Կոստանդինի չընծայեր:

Կը համարիմ որ այս վէպը երեւցած
 ըլլայ մեր մէջ Կոստանդինէ առաջ, ԺԴ
 դարու մէջ, այն շրջանին՝ երբ Պրնէ Գա-
 դաքը երեւցաւ:

Մեր մատենադարանի ամենէն հին Տա-
 դարաններուն մէջ եւս կարելի է գտնել սոյն
 վէպը. ամենէն հին օրինակն է Թ. և 1330,
 որ գրուած է 1563ին Թոխաթի մէջ. ու-
 բիշ մը՝ որ չի՛ ճանչնար մեր Զեռագրաց
 ցուցակը՝ գրուած է Ի Խարբերդ 1564ին
 (Թ. 234) և երրորդ մը (նոյնպէս անծա-
 նօթ Զեռագրաց ցուցակին՝) գրուած է
 է 1590ին (Թ. 325):

Դիտուած պիտի ըլլայ՝ որ մեր ԺԴ. ԺԵ
 դարերու գրիչք՝ անհոգ եղած են Տադարան-
 ներ և այդպիսի վիպական գրութիւններ օ-
 րինակելու, այդ պատճառաւ է որ ԺԴ դա-
 րու մէջ թարգմանուած Պրնէ քաղաքի ձե-
 ոագիր օրինակ մը չունինք, ո՛չ մինք ոչ
 ուրիշները՝ որ ԺԴ, ԺԵ դարերու մէջ գը-
 րուած ըլլայ. հին օրինակները, որոնք հա-
 զուագիտ եղած պէտք են ըլլալ՝ կոր-
 սուած են:

Մեծ. Փր. Մազլէր իր հրատարակու-
 թեան սկիզբը (էջ 420 Ի ծնթ.) կը պնդէ
 հակառակ Ա. Չոպանեանի կարծիքին՝ թէ
 վէպս պարսկերէնէ բառացի թարգմանու-
 թիւն մ'է, այն պատճառաւ՝ որ շատ մը
 պարսիկ բառեր կան հայերէն թարգմա-
 նութեան մէջ. և թէ թարգմանիչը չէ հաս-
 կըցած և չէ կըցած զանոնք հայերէն թարգ-
 մանել. բայց ի սակից՝ Թիֆլիզեցի հայ մը
 1905 յայտարար Լաստ է իրեն որ իր հայ-
 րենակից մը, Պեռլին հաստատուած՝ Ֆար-
 մանի Ասման վէպին պարսկերէն բնագիրը
 ունի եղեր, և որ կը խոստանայ օրինա-
 կութիւն մը յղել իրեն: Բայց քանի որ ցարդ
 զայն զրկած չէ՝ կը համարինք որ սխա-
 լած պիտի ըլլայ այդ տեղեկատուը:

Իրաւ է, որ Ֆարմանի Ասմանի վէպին
 մէջ բառական պարսկերէն բառեր կը գըտ-
 նուին, բայց անոնք երբեք նպատաստոր
 ապացոյց մը չեն Պ. Փր. Մազլէրի կար-
 ծիքին. վասն զի մեր միջնադարեան մա-
 տենագիրք, մանաւանդ ժողովրդական եր-

գիշեր՝ թէ՛ ուղղակի և թէ՛ անուղղակի կը գործածեն թուրք, պարսիկ և արաբ բառեր, ինչ որ ժողովրդեան համար ընտանեցած էին. և շատ անգամ պարսիկ բառին ըով կը դնեն նաեւ հայերէնը, ինչպէս սա մի քանի օրինակները՝ ներկայ վէպէն հանուած. գանձ — խազինայ. դար — խար — քուն. դարբանը — կապան, և այլն:

*

Հոս կը դնեմ մի քանի գլխաւոր ուղղագրութիւնք՝ որոնք արդէն հաղորդած եմ Մեծ. թարգմանչին իր ինձ ղրկած փորձերը մեր ձեռագրաց հետ բաղդատելէս վերջ: Բայց ստաշին մասին տպագրութեան աւարտումէն ետք հասած ըլլալով՝ չէ կրցած ո՛ր և է փոփոխութիւն մ'ընել:

Ա. — 36 (թիւ քառասկիւն). « Նետող աղեղնաւոր » ունի իր ձեռագիրը, որ պէտք է ըլլայ « Նետով աղեղնաւոր ».

Բ. — 61-62. կը պակսի հետեւեալ տանը ու.

Յարման մանուկն ի նա պատասխանեալ է,
Թէ ինձ շատ հոգեւոր զընայն ի պէտք չէ.
Ո՛չ մաւ, ո՛չ խազինայ ինձի պիտոյ է,
Ոչ քո գալն ի հետ ինձ՝ սիրտըս յօժար է:

Գ. — 74. Զեռագրին մէջ կը պակսի ընդգծեալը « Անուն դրին ետրա գիտուն աննրման »:

Դ. — 76. « Զուրպալ ցուցանէ » և ոչ թէ « Զամբան ցուցանէ »:

Ե. — 77-8. կը պակսի հետեւեալ տունը

Ասաց. ազէկ մանուկ, քու անուդ ի՛նչ է.
Ասաց թէ ի՛նչ անունս, Յարման Աման է:
Հարցաւ. վասն ի՛նչ իրաց այդպէս անուն է.
Ասաց. վասն աստեղաց որ զուշակեալ է:

Զ. — 97. « Ի՞նչաւ ի ձիւսնուն նոցա հրամայէ », պէտք էր թարգմանել des chevaux և ոչ de cheval:

Է. — 98. « Այսօր ի ձեր միջիդ է մանկութեան գոր ». թարգմանած է « Aujourd'hui est pour vous deux le jour de la bravoure ». հոս գոր կը նշանակէ գորտրին, ուժ:

Ը. — 99. Հետեւեալ տողը պէտք է կարդալ սապէս. « Ասաց. մի՛ խղճաւ, յոյր դու

գիս յաղթէ »: — Լոր կը նշանակէ լոկ, միայն, և ո՛չ լոկ:

Թ. — 116. Մեր ամենայն օրինակը՝ « Եկեալ մանուկն Յարման ընկերօքն ի ձի » իր օրինակը՝ յայտնի:

Ժ. — 118. « Որ զիս հոգիս առել հետ իւր կու գերեք » և ոչ թէ կու կրեք կամ կոս գրեք:

ժԱ. — 121. « Պատվէր Յարման մանկանըն տայ և ղրկէ » և ոչ թէ « պատմէր »:

ժԲ. — 149. « Պէկուման դայիսար » պէտք է ըլլայ դարիսար. պարսիկ բառ (տէրիսապ) որ կը նշանակէ՝ քոն:

ժԳ. — 192. « Ասա՛ ինձ մեկ » (ամէն), բոլոր և ոչ թէ մեկ:

ժԴ. — 202. « Ելնէ նա ի բանտէն գիշերով կամկար ». այս տողը թարգմանած է « Il sort à pas de loup de la prison pendant la nuit » կամկար (կամակար) հոս առդակի կը նշանակէ:

ժԵ. — « Լինի խիստ քաղցրածայն մտրուպ ու շիվայ ». իր օրինակը ազաւաղուած և անհասկանալի եղած է թարգմանչին: Մտրուպ՝ է՝ արաբ Միւլթրուպ — նուագածու, երաժիշտ. իսկ շիվա, ըստ Հ. Պօզաճեանի՝ բառ պարսիկ — պերճախօս:

ժԶ. — 221. « Այն զօրքն հագրեցաւ ». պէտք չէ կարդալ « հոս գրեցաւ »:

ժԷ. — 232. Թարգմանուած է « J'ai trouvé pour toi une forteresse incomparable » — անկուման. հոս անկուման լաւագոյն է հասկնալ անկասկածելի:

ժԸ. — 250. « Ուսկայ սրտում եմ ». Անահիտի մէջ սրբագրուած է յոսկայ, իսկ 260ին մէջ « Ուսկայ եկի շուտով »: հոս կայ եկի շուտով: Ուսկայ (Տես Կ. Երզնկացոյ բառերուն մէջ Մեծ. Նորայրի լուսարանութիւնը) կը նշանակէ հիմայ:

ժԹ. — 294. Պէտք է կարդալ « Գլսան ձի անըման », և ոչ թէ « քսան ձիւն նըման »:

Ի. — 295. « Զաղծիկն ալ փոխեն ի մանկան շիվա ». վերջին բառը որ թարգմանուած էր՝ կը նշանակէ պրսկ. ձեւ, ոճ, կերպարանք, Եւ այլն, և այլն:

Հ. Մ. ՊՈՅՈՒՐԵԱՆ